ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

07.07.2025թ.

Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք,Եղեգնաձոր բնակավայր

2025 թվականի հուլիսի 7-ին ժամը 18:30-ին համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. հանրության իրազեկման և հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին № 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի մշակույթի տան դահլիճում (ՎՁՄ, Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր բնակավայր, Մոմիկի 1) տեղի ունեցավ «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ, ՎՁՄ, Գլաձորի բազմամետաղային հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ոսումնասիրության աշխատանքների առաջին փուլ հանրային լսումը:

Քննարկմանը մասնակցում էին՝ Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանը, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Ավագյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Սամվել Այվազյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի իրավաբան Գառնիկ Խաչատրյանը, «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Մանվել Ղազարյանը, տնօրեն Արամ Օսիկյանը, երկրաբան Նելսոն Պողոսյանը, ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանը, միջազգային բնապահպանության փորձագետ, հիդրոլոգ Բենիամին Զաքարյանը, իրավաբան-բնապահպան Նազենի Վարդանյանը, բժշկուհի Շողիկ Գրիգորյանը և Եղեգնաձոր համայնքի՝ Մալիշկա, Գլաձոր, Վերնաշեն, Գետափ, Եղեգնաձոր բնակավայրերի մի խումբ բնակիչներ, ինչպես նաև հարևան համայնքների շահագրգիռ բնակիչներ:

Մասնակիցների ցուցակով գրանցվել է 147 անձ, սակայն իրականում դահլիճում մոտավորապես 250 և ավել մարդ կար:

Քննարկումը սկսեց Վարդան Ավագյանը, ներողություն խնդրեց քննարկումը ուշ սկսելու համար, ներկայացրեց, որ օրենքի համաձայն կազմակերպել են հանրային լսումը և խնդրեց ակտիվ մասնակցել քննարկմանը, արտահայտել իրենց կարծիքները՝ էթիկայի կանոնները պահպանելով, իհարկե լսելով և՛ նախաձեռնողներին և՛ կարծիք արտահայտնողներին՝ չվերածելով այն վեճի: Նշեց, որ նիստը վարելու է Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Սամվել Այվազյանը, արձանագրելու է Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գառնիկ Խաչատրյանը:

Ս.Այվազյանը ողջունեց ներկաներին, շնորհակալություն հայտնեց մասնակցության համար և ներկայացրեց, որ «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ ընկերությունը դիմել է Եղեգնաձորի համայնքապետարանին, որը նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ուսումնասիրության աշխատանքներ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի բազմամետաղային հանքավայրի տարածքում և օրենքով սահմանված կարգով Եղեգնաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպվել է այսօրվա լսումը: Ներկայացրեց, որ սահմանվել է օրակարգ, սկզբում կներկայացնի նախաձեռնողը կատարվող աշխատանքների վերաբերյալ, այնուհետև ելույթներ մինչև 5 րոպե, հարց ու պատասխան, վերջում ամփոփում և ավարտ:Խոսքը տվեց «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ հիմնադիր տնօրեն Մանվել Ղազարյանին:

Մ. Ղազարյանը նախ ողջունեց ներկաներին, ասաց որ իրեն համարում է այդ տարածքի բնակիչ, աշխատել է Գետափի գինու գործարանի տնօրեն, մի գործարանի, որը 90-ականներին չէր աշխատում, ձեռք բերված օրվանից սկսել է գիշեր-ցերեկ աշխատել, այգիներ հիմնել, ընդլայնել: Այդ ժամանակահատվածում համայնքապետերը համոզում էին իրեն տարածքի տրամադրման պայմաններով այգիներ հիմնել և աշխատատեղեր ստեղծել: Նա նշեց, որ հանքարդյունաբերության ոլորտում զբաղվել է իր եղբայրը, իր համար սա մասնագիտական չէ, բայց վստահ է, որ իր աշխատանքային փորձից ելնելով ցանկացած

գործ, որը նա նախաձեռնել է ավարտվել է հաջողությամբ, մշտապես կարողացել է ստեղծել աշխատատեղեր, վճարել է հարկեր պետությանը:

Ավելացրեց, որ ինքը վստահ է, որ իրենց համագործակցությունը կստացվի ինչպես նախկինում է եղել և ակնկալում է մեր աջակցությունը: Նշեց, որ մնացածը մասնագիտական խնդիրներ են և կներկայացնեն մասնագետները:

Արամ Օսիկյանը նշեց, որ մենք շատ ենք հանդիպել, շատ խոսել, իրականում աշխատանքների կատարման առումով շատ քիչ բան է փոխվել: Վերջին 2-3 տարվա մեջ պետական պահանջները շատ են փոխվել հանքավայրերի ուսումնասիրության և շահագործման, գները փոխվեցին և Գլաձորի մասով պահանջ եկավ, որպեսզի նորից ուսումնասիրվի նոր պահանջներով և ես վստահ եմ, որ պաշարները կավելանան և դրա համար ձեռնամուխ են եղել ուսումնասիրել՝ հետագայում շահագործելու համար: Մենք օգտագործում ենք պետական տվյալները, նորմատիվները և պետությունն է ասում դա կարելի է թե չի կարելի մետաղների մասով– բազմամետաղային հանքավայր է, գերակշռում է ցինկը և արճիճը, ոսկին և արծաթը և այլ մետաղներ քիչ են պարունակում:

Հետախուզում- պետք է ավարտվի 3 տարում: Մինչև 5000 գծամետր սյունակային հորատում, հետախուզաառուների անցում 1000 գծամետր 10-15 սմ խորությամբ, 1-2 մ լայնությամբ,հանվելու է փորձնական հանույթ՝ պետական նորմատիվներով խրամատների տեսքով 5 մ խորությամբ, վերջում կամ ցանկապատվում է կամ հարթեցում է կատարվում: Մենք ընտրելու ենք հարթեցման եղանակը: Այնուհետև 2-րդ հանրային լսումներ կկայանան նորից, հաշվի կառնվի ձեր դիտողությունները:Հանքավայրի պաշարները հաստատելուց հետո շահագործելու ենք միայն ստորգետնյա եղանակով: Շահագործման ժամանակ նորից կատարվելու է ժողովներ:

Տնտեսական գծով– նշեց, որ կստեղծվի 350 աշխատատեղ, մինիմում աշխատավարձը 150000 ՀՀ դրամ, միջին աշխատավարձը՝ 400000 ՀՀ դրամ, լինելու է պրոֆմիություն, բժշկական ապահովագրություն, երկրաբանական մասնագիտությամբ ուսանողների ծախսերը ընկերությունը վերցնելու է իր վրա և պրակտիկան լինելու է իրենց մոտ, ավարտելուց հետո էլ աշխատելու են իրենց մոտ:

Ուսուցիչների համար ունեն հատուկ ծրագրեր, խմելու ջրի հարցով կատարում են ուսումնասիրություններ, Գետիկվանքից մոտ 30 կմ հեռավորության վրա կառուցվելու է ջրագիծ: Ներկայումս 10 կմ–ը լավ վիճակում է, 20 կմ–ը պետք է նոր կառուցվի: Ջուրը գալու է մինչև Արգյազ 300 մմ խողովակաշարով: Նշվեց նաև, որ մինչև Վերնաշենի խմելու ջրի հարցը չլուծվի՝ հանքը չի շահագործվի: Վերնաշենում խմելու ջրի հարցը կլուծվի 2-3 ամսում: Օսիկյանի ելույթի ժամանակ հարց տվեց Շատին գյուղի բնակիչ Խաժակ Գրիգորյանը: Հարցրեց, արդյո՞ք Գեդիկ վանքից ջուր վերցնելու դեպքում դուք ակունքում ուսումնասիրել եք խմելու ջրի պաշարը, քանի որ դրանից օգտվում են շուրջ 12 բնակավայր՝ մինչև Արենի և Եղեգնաձոր: Արամ Օսիկյանը պատասխանեց, որ ավելի խորը կուսումնասիրեն և այն կքննարկվի ազգաբնակչության հետ, նախարարությունն էլ կօժանդակի: Առաջարկեց, որ միասին, տեղում կուսումնասիրեն:

Հարց տվեց Արտաշես Կոստանյանը, ասելով, որ ամեն ինչ գեղեցիկ ներկայացնում եք, սակայն չեք ասում ռիսկերի, հետևանքների, վտանգավոր երևույթների մասին:

Օսիկյանը պատասխանեց, որ ներկայումս շատ խստորեն են պահպանելու բոլոր բնապահպանական կանոնները և նորմերը:

Ելույթ ունեցավ երկրաբան՝ Նելսոն Պողոսյանը: Ներկայացրեց, որ հանքավայրը շահագործվելու է փակ եղանակով, արվելու են հորիզոնական լեռնային փորվածքներ, որոնք հանելուց հետո լցվելու և փակվելու է: Այս հանքավայրում ոսկու պաշարը քիչ է, հիմնականում ցինկ և կապար է: Պղնձի պարունակությունը ավելի քիչ է:

Այդ ընթացքում հարց տվեց Մալիշկա գյուղի բնակիչ Հրահատ Սարգսյանը: Հարցս վերաբերվում էր հանքավայրի քանդման ազդեցությանը շրջակա միջավայրի վրա:

Նելսոն Պողոսյանը պատասխանեց, ասելով, որ հանքի հետազոտման համար լինելու է ՇՄԱԳ հետազոտություն, կատարելու ենք լրացուցիչ լեռնահանքավայրի հետազոտություն առանց բացելու լեռնային փորվածքներում՝ բլոկային պահեստավորման մեթոդով: Արին գյուղում կառուցելու են վերամշակման գործարան:

Հարց տվեց Գետափ գյուղի բնակիչ Փայլակ Ավետյանը նշեց,այն մասին, որ ԽՍՀՄ տարիներին մեր գյուղի բնակիչ Վարազդատ Հարությունյանը, որը աշխատում էր գլխավոր

ինժեներ հանքը 3 ամիս շահագործվել և փակվելուց հետո ապրեց ընդամենը մի քանի ամիս: Ասացին, որ հանքում ուրան է դուրս տալիս և հանքը փակվեց: Նա դիմեց Մանվել Ղազարյանին, որ ավելի լավ է ընդլայնել խաղողագործությունը, քանի որ նախկինում 5000-6000 տոննա խաղող էր մթերվում, իսկ այժմ 500-600 տոննա է մթերվում: Նելսոն Պողոսյանը պատասխանեց, որ ուրան չկա և ունենք բնապահպանության ինֆորմացիա:

Եղեգնաձոր համայնքի բնակիչ Սերգեյ Մակարյանը հարց տվեց այն մասին, որ իրեն հետաքրքրում է վերջին 3 տարվա մեջ ինչ փոխվեց, նախկինում ուսումնասիրությունների ժամանակ հանքանյութի մեջ եղել է ուրան:Սովետական միության ժամանակ եղել է նույն անալիզները: Այն ժամանակ ասվում էր, որ կամ բնակիչներին տեղափոխեն, կամ էլ հանքը պետք է փակվի: Նշեց, որ ուրանի ազդեցությունը հանքավայրի մակերեսին 10% է, սակայն երկրաբանը նշեց, որ նման բան գոյություն չունի: Երկրաբանը ասաց, որ ոչ մի երկրում 10% ցուցանիշ գոյություն չունի: Նույն հարցը տվեց Դերենիկ Անդրեասյանը, ասելով, որ սովետական միության ժամանակ ուրան կար, իսկ ներկայումս ասում եք, որ նման բան չկա: Նելսոն Պողոսյանը պատասխանեց, որ Ղազմայում ուրան չկա:

Ելույթ ունեցավ Եղեգնաձոր համայնքի բնակչուհի Խնկանուշ Մարկոսյանը: Հիմնականում նա նշեց, որ դեռևս մանկության տարիներից Ղազմա հանքի վերաբերյալ ունի հիշողություններ, որ գեոլոգների խումբը եկել էր իրենց հարևանի տանը և լսել էր, որ որոշել են տարածաշրջանի բնակչությանը տեղահանեին Ռուսաստանի Կրասնոդար քաղաքը, սակայն հետո հաշվարկել էին տեղափոխման ծախսերը, որը ավելի շատ էր, քան հանքի շահագործումից ստացված եկամուտը, հանքի շահագործումը դադարեցրել են: Նշեց նաև, որ իր ծանոթը հանքում է աշխատել և երիտասարդ մահացել է: Հիմնականում արտահայտվեց դեմ հանքի շահագործմանը և նշեց դրա վնասակարության մասին:

Ելույթ ունեցավ Վերնաշեն գյուղի բնակիչ Հարություն Գևորգյանը հիմնականում նշելով, որ դեմ է Գլաձոր հանքի բացմանը և նշեց նրա վնասակարության ազդեցությունը շրջակա միջավայրի, հարակից գյուղերի և ընդերքային ջրերի վրա: Նա նշեց, որ հանքում ուրանի պաշարներ կան և ունեն ռադիոակտիվության բարձր ցուցանիշ: Նա ներկայացրեց հանրային լսումը վարողին բոլոր փաստաթղթերը: Նա կոչ արեց բնակչությանը դեմ լինել հանքի բացմանը:

Կցվում է փաստաթղթերը

Ելույթ ունեցավ Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Հայկ Իսախանյանը: Նշենք, որ Հայկ Իսախանյանը էլեկտրոնային եղանակով Եղեգնաձորի համայնքապետարան էր ուղարկել Գլաձոր բազմամետաղային հանքավայրի վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ և կարծիքներ, որի մասին հայտարարվեց դահլիճում: Ելույթ ունենալիս հիմնականում նա դեմ արտահայտվեց հանքավայրի բացմանը՝ նշելով, որ ինքը հանդիսանում է Գլաձոր հանքավայրի դեմ արտահայտվողների նախաձեռնող խմբի անդամ: Ելույթի ժամանակ նա նշեց, որ դեռևս մանկության տարիներից ծանոթ է պապի միջոցով Ղազմայի հանքի մասին, դրա վնասակարության, ուրանի պաշարի առկայության, հանքավայրի թթվային լինելու մասին և խնդրեց ազգային ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանին, որ այս հարցը բարձրացնի ազգային ժողովում:

Հիմնականում նա դեմ արտահայտվեց և բերելով բազմաթիվ փաստարկներ հանքի վնասակարության մասին կոչ արեց ազգաբնակչությանը դեմ արտահայտվել հանքի բացմանը:Նա ելույթի ավարտից հետո նույնպես վարողին տրամադրեց բազմաթիվ փաստաթղթեր, որոնք կցվում են սույն արձանագրությանը:

Կցվում է:

Ելույթ ունեցավ Գլաձոր գյուղի բնակիչ Արմեն Ստեփանյանը: Նա հիմնականում նշեց, որ ինքը կողմ է հանքի բացմանը և դիմեց Սերգեյ Բագրատյանին հարցնելով, թե արդյո՞ք կան այնպիսի ինստիտուտներ, որոնք կուսումնասիրեն և հստակ պատասխան կտան հասարակությանը ուրանի առկայության մասին:

Տես տեսանյութ:

Ելույթ ունեցավ Քնարիկ Գրիգորյանը, ով նշեց, որ հանքի շահագործումը լուրջ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Նշեց առաջացող հիվանդությունների մասին, բերեց օրինակներ Կապանից, որտեղ երեխաների արյան մեջ հայտնաբերվել է կապար: Հիմնականում դեմ արտահայտվեց հանքի շահագործմանը և տրամադրեց նյութեր վարողին:

Կցվում է:

Ելույթ ունեցավ էկոլոգ, իրավաբան Նազենի Վարդանյանը:

Նշեց, որ 5 տարի պայքարելուց հետո մենք կանգնեցինք նոր կետում: «ՄԵՏԱ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի

Կողմից ներկայացված ծրագիրը ծրագիր չի, քանի որ բացակայում է բնապահպանական մասը, վնասակարության մասը:Այստեղ դրված են քարտեզներ, որոնքնախկին քարտեզից տարբերվում են: Նախկինում այդ տարածքները փոքր էին, հարում էին արգելոցի սահմաններին: Այդ տարածքները համարվում են վայրի կենդանիների միգրացիոն ճանապարհ: Նշեց, որ հանքի բացման դեպքում դրա վնասակարությունը, քաղցկեղով մահացության դեպքերի աճը, կոչ արեց Վայոց ձորի ազգաբնակչությանը դեմ արտահայտվել ընդհանրապես հանք ունենալուն:

Ելույթ ունեցավ Գլաձոր գյուղի բնակիչ Արման Վարդանյանը: Նա հիմնականում նշեց, որ նախկինում մենք դեմ ենք եղել, քանի որ նշվում էր հանքի բաց շահագործումը, իսկ հիմա քանի որ լինելու է հանքի փակ շահագործում՝ կողմ ենք: Խնդրեց չչարանալ միմյանց հանդեպ:

Տես տեսանյութ:

Ելույթ ունեցավ Վերնաշեն գյուղի բնակիչ Ստեփան Ստեփանյանը: Դեմ արտահայտվեց, նշեց այն վայրերը, որոնք ավելի մոտիկ են հանքին, նշեց նաև, որ վտանգի տակ են գտնվելու տարածքի ողջ բուսական և կենդանական աշխարհը: Նշեց ճանապարհների անցումը սեփական խոտհարքներով և աղտոտվածության վնասակար ազդեցության մասին: Նշեց ուրանի և կապարի պաշարների գոյության մասին և տրամադրեց նյութեր վարողին:

Կցվում է:

Ելույթ ունեցավ նաև Բենիամին Զաքարյանը, ով ջրային ռեսուրսների մասնագետ, հիդրոլոգ է: Նշեց կառավարության որոշումների համաձայն Վայոց Ձորում պետք է կառուցվի 4 ջրամբար, որից մեկը անմիջապես հանքի կից տարածքում: Նշեց, որ Մալիշկա և Վերնաշեն բնակավայրերի հյուսիսային մասում ընկած ստորգետնյա ջրերի ջրհավաք ավազանը գտնվում է նույն հանքի տարածքում:

Ելույթ ունեցավ Գլաձոր բնակավայրի մի բնակիչ և նշեց, որ ինքը և իր գերդաստանը ապրում են Գլաձորում: Նշեց, որ իրենք ունեն հանք ու թող մասնագետները ստուգեն, եթե վնաս է տալիս թող չշահագործեն և համապատասխան ձևով շարունակեն իրենց աշխատանքները:

Ելույթ ունեցավ Վերնաշեն գյուղի ուսուցչուհի Կարինե Ստեփանյանը, նշելով, որ երեխաների ստվար զանգվածը առանց այն էլ ունի առողջական խնդիրներ և դիմեց պատկան մարմիններին ասելով, որ եթե աշխատատեղեր եք ստեղծելու, ապա այլ վայրերում ստեղծեք: Հիմնականում դեմ արտահայտվեց և կոչ արեց իր նկատմամբ լինել հանդուրժող:

Ելույթ ունեցավ Դերենիկ Անդրեասյանը նշելով, որ հանքի բացումը ունի մեծ ռիսկեր: Սովետական միության ժամանակ այն բացվել և փակվել է, քանի որ ուրանի առկայություն է եղել: Սովետական միության ժամանակ ավելի մեծ տեղ է տրվել մարդկանց առողջությանը և դեմ արտահայտվեց հանքի շահագործման համար:

Ավելի մանրամասն տես տեսանյութում:

Ելույթներից հետո քննարկումը հայտարարվեց ավարտված:

Կից՝

1. Տեսաձայնագրություն
2. Մասնակիցների ցուցակ- 5 էջ
3. Մասնակիցների կարծիքների ցուցակ- 5 էջ
4. Հայկ Իսախանյանի էլ. փոստով-38 էջ
5. Հայկ Իսախանյանի հանրային լսում-48 էջ
6. Հարություն Գևորգյանի ներկայացրած փաստաթղթեր-4 էջ
7. Երկրաբան Նելսոն Պողոսանի ներկայացրած փաստաթղթեր-3 էջ
8. Ստեփան Ստեփանյանի ներկայացրած փաստաթղթեր-13 էջ
9. Քնարիկ Գևորգյանի ներկայացրած փաստաթղթեր-1 էջ

Նիստը վարող՝ Սամվել Այվազյան

Նախաձեռնող՝ Արամ Օսիկյան